

ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
06.04.2021թ. նիստի N 8 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵԼՀ ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման մրցութային ընտրություն:
2. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի 36 անդամներից նիստին ներկա էին 36-ը:

Գ. Բարսեղյանը ողջունեց իր գործընկերներին, նշելով, որ անչափ ուրախ է նրանց տեսնել դեմ առ դեմ ձևաչափի շրջանակներում՝ հավելելով, որ համավարակի պատճառով նմանօրինակ նիստեր ամիսներ շարունակ չեն իրականացվել, փոխարենը գիտխորհրդի յոթ և ավել նիստեր իրականացվել են հեռավար ձևաչափով: ԵԼՀ ֆակուլտետի դեկանը ներկայացրեց արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման մրցութային ընտրության կարգը և թեկնածուներին: Նա ասաց, որ վերջերս նախագահել է արտասահմանյան գրականության ամբիոնի նիստը, որը անցել է չափազանց խաղաղ, առողջ, բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտում: Խոսելով արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնող երկու թեկնածուների մասին, նա ասաց, որ երկուսն էլ արժանի մրցակիցներ են, ունեն մանկավարժական ու գիտական հարուստ փորձ, օժտված են ինտելեկտուալ բարձր կարողություններով: Անդրադառնալով արտասահմանյան գրականության ամբիոնի նիստի արդյունքներին Գ.Բարսեղյանը նշեց, որ արտասահմանյան գրականության ամբիոնը առաջնությունը տվել է ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Սեդրակյանի թեկնածությանը: Բոլորովին էլ չնսեմացնելով պրոֆեսոր Տիգրան Սիմյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը, Գ.Բարսեղյանը նշեց, որ այս հարցում չափազանց կարևորում է ամբիոնի որոշումը՝ հավելելով, որ վերջին ութ ամիսների ընթացքում որպես արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Սեդրակյանը վիթխարի աշխատանք է կատարել՝ նպաստելով ամբիոնի բարոյահոգեբանական մթնոլորտի վերականգնմանը: Ի նպաստ ամբիոնի և ֆակուլտետի Ա.Սեդրակյանը համագործակցության կապեր է հաստատել մի շարք հեղինակավոր կազմակերպությունների, գիտամանկավարժական հաստատությունների, ինչպես նաև բազմաթիվ դեսպանատների հետ: Բարսեղյանը խոսքի համաձայն, ով էլ, որ ընտրվի ամբիոնի վարիչ, քաղելու է Ա.Սեդրակյանի տքնաջան աշխատանքի պտուղները:

Մրցութային հանձնաժողովի նախագահ, բ.գ.թ., պրոֆեսոր Ա.Զուբարյանը ներկայացրեց երկու թեկնածուների անձնական գործերը:

Նա նշեց, որ Ա. Սեդրակյանը ԵԼՀ ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատարն է, ունի գիտամանկավարժական 31 տարվա ստաժ, հեղինակ է 3 մենագրության, 1 ուսումնամեթոդական ձեռնարկի, 29 գիտական հոդվածների, որոնցից 10-ը հրատարակվել է վերջին 8 տարվա ընթացքում: Դասախոսը ուսանողի աչքերով սոցիալական արդունքներով միջին միավորը 4.57 է: Ա.Սեդրակյանը երկու գիտական հաղորդաշարի հեղինակ է:

Տ.Սիմյանը բ.գ.դ., պրոֆեսոր է, ունի գիտամանկավարժական 20 տարվա ստաժ, հեղինակ է 2 մենագրության, 1 քրեստոմատիայի, 1 ուսումնամեթոդական ձեռնարկի, 124 գիտական հոդվածների, այդ թվում 60-ը տպագրված արտասահմանյան պարբերականներում: Պաշտպանված 3 գիտական ատենախոսությունների ղեկավար է: Դասախոսը ուսանողի աչքերով սոցիալական արդունքներով միջին միավորը 4.47 է: Հաղթող է ճանաչվել 2020թ. հայտարարված ԵՊՀ-ում “Դասավանդման գերազանցության մրցանակ” ամենամյա մրցույթի անվանակարգում: Տ.Սիմյանի անձնական գործի փաթեթում առկա են յոթ միջնորդագրեր՝ ներկայացված տարբեր համալսարանների պրոֆեսորների կողմից: Ըստ ընթացակարգի, այբբենական կարգից ելնելով, Ա.Սեդրակյանը ներկայացրեց իր ծրագիրը: Իր խոսքում նա անդրադարձավ գիտության և հանրամատչելիության իդեալական համակցության գաղափարին: Նրա համոզմունքով ուսանողի մոտ պետք է զարգացնել քննադատական և սելեկտիվ մտածողություն: Ուսանողին պետք է համապատասխանեցնել աշխատանքային շուկայի պահանջներին: Այդ առումով նա ընդգծեց լեզուների իմացության կարևորությունը: Նա էական նշանակության արժանացրեց նաև թիմային աշխատանքը: Այդ առումով, Ա.Սեդրակյանը նշեց, որ ամբիոնը ֆանտաստիկ կարողություն ունի և կարող է դրամաշնորհների միջոցով օգուտ բերել ԵԼՀ ֆակուլտետին: Ըստ Ա. Սեդրակյանի միջամբիոնային համագործակցությունը ամենակարևոր հարցերից մեկն է, ինչը մեծ, դրական արդունքներ կարող է բերել ֆակուլտետին: Նա առաջարկեց նաև՝ դասախոսություններ իրականացնել տեսաձայնագրությունների տեսքով և տեղադրել ԵՊՀ-ի կայքում, ինչը կընդլայնի դասախոսի գործունեությունը: Ա.Սեդրակյանը չափազանց կարևորեց մարդկային գործոնը բոլոր գործընթացներում:

Տ.Սիմյանը ներկայացրեց իր ծրագիրը: Առաջնահերթությունը տրվեց իր կենսագրական տվյալներին, որոնք արժեքավոր դերակատարություն են ունեցել իր գիտամանկավարժական գործունեության մեջ: Որպես նպատակ Տ.Սիմյանը նշեց, որ ցանկանում է հասնել ամբիոնի միջազգայնացմանը, ԵԼՀ-ի իմիջի բարձրացմանը, կարևորեց նաև պրոֆեսիոնալիզմը, որը պետք է դրվի շրջանառության մեջ՝ թափանցիկության, պատասխանատվության, վերահսկողության և կոնսենսուսի ձևաչափով: Նա հավելեց նաև, որ անհրաժեշտ է համարում, որ դասախոսները ներկայացնեն դասախոսությունների շարք, ինչը շատ կարևոր դերակատարություն կունենա գիտական գործունեության ոլորտում: Կարևորվեց նաև միջամբիոնային և միջֆակուլտետային համագործակցությունը: Ամբիոնի միջազգայնացման առումով կարևորվեց նաև նեղ ասպեկտայինությունը: Ամբիոնի

և ուսանողների ռեստարտի տեսանկյունից շեշտադրվեց կինոդիտումների գաղափարը՝ տարբեր լեզուներով: Առաջարկվեց, որ դասախոսությունները տեքստային ձևաչափ ստանան, դասախոսներն ու ուսանողները կլոր սեղան քննարկումներ իրականացնեն, ՈԻԳԸ-ի հետ կապեր սերտացվեն՝ կազմակերպելով քննարկումներ: Տ.Սիմյանը հավելեց նաև, որ պետք է ուսանողներին օգնել իրականացնելու գիտական աշխատանքներ, կազմակերպել վիկտորինաներ:

Լսելով երկու թեկնածուների ելույթները գիտխորհրդի անդամները անցան մտքերի փոխանակման: Հ.Էդոյանը ողջունեց երկու թեկնածուներին, ասաց, որ շատ ուրախ է, որ երկու թեկնածուներն էլ իր ուսանողներն են եղել, երկուսն էլ ունեն ակնհայտ առավելություններ: Նա նշեց, որ Ա. Սեդրակյանը ունի ստեղծագործական անհատականություն, ինչը շատ կարևոր է ամբիոնի վարիչի պարտականությունը ստանձնող անձի համար: Հ.Էդոյանը երկու թեկնածուներին էլ մաղթեց հաջողություն:

Արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Ա.Սողոմոնյանը նշեց, որ իր հանդիպումը Ա. Սեդրակյանի հետ եղել է դեռևս երկրորդ կուրսից, որի արդյունքում նա այնքան է տպավորվել Ա. Սեդրակյանի կերպարով, այնքան մեծ է եղել նրա կշիռը իր կյանքում, որ ցանկացել է նրա նման խոսք ունենալ, նրա նման դասախոսություններ կարդալ: Ա.Սողոմոնյանը խոսեց, նաև Տ.Սիմյանի մասին, նշելով, այն ամենն, ինչ ինքը/Ա.Սողոմոնյանը/ իրականացնում է՝ հոդվածների տպագրման, դասախոսությունների պատրաստման առումով, վերցրել է հենց նմանօրինակ դասախոսների կատարման ձևից:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ մ.գ.թ., դոցենտ Զ.Հարությունյանը նշեց, որ իր համար տոնական օր է, առողջ ու համերաշխ մթնոլորտում է նիստը անցնում, չկրելով ձևականության ոչ մի նշույլ: Անկախ նրանից, թե որ թեկնածուն կընտրվի, նրանք պետք է համագործակցեն ի շահ ամբիոնի ու համալսարանի: Նա նշեց, որ շատ ուրախ է, որ ծանոթացավ Տ. Սիմյանի հետ, որը գիտական մեծ ներուժ ունի: Նա հավելեց, որ վաղուց է ճանաչում Ա. Սեդրակյանին, գնահատում է նրա մարդկային ու գիտական որակական հատկանիշները: Նա հաջողություն մաղթեց երկու թեկնածուներին:

Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Շ.Պարոնյանը հարց ուղղեց Տ.Սիմյանին, համաձայն որի Տ.Սիմյանի ներկայացրած ծրագրում առկա էր որոշակի միջամտություն իր ամբիոնի գործառույթներին և ուսումնական ծրագրերին և խնդրեց հստակեցնել այդ խնդիրները: Ի պատասխան Տ.Սիմյանը հնչեցրեց պարզաբանումներ:

Ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Մելքոնյանը կիսվեց իր տպավորություններով ընթացող նիստի վերաբերյալ: Նա ասաց, որ շատ հաճելի էր լսել երկու թեկնածուների գրագետ ու սահուն խոսքը, կարևորեց այն գեղեցիկ ու առողջ մթնոլորտը, որի մեջ ընթանում էր նիստը: Նա երկու թեկնածուներին մաղթեց հաջողություն:

Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., պրոֆեսոր Մ.Ապրեսյանը ելույթ ունենալով նշեց, որ կանգնած է բարդ ընտրության առջև: Նա նշեց, որ Ա. Սեդրակյանին ճանաչում է 20-ից ավել տարի, ծանոթ է նրա գիտական պոտենցիալին, մարդկային հատկանիշներին: Նրա համար հաճելի էր լսել նաև Տ. Միմյանին, ով գրագետ համապարփակ ելույթ ներկայացրեց: Երկուսն էլ արժանի թեկնածուներ են, բայց Ա. Սեդրակյանի մեջ տեսնում է գիտնականի, ստեղծագործողի, մանկավարժի կերպար, ով փայլուն տիրապետում է խոսքի մշակույթին: Ա.Միմյանի առումով Մ.Ապրեսյանը կարևորեց նրա հմուտ գիտնական լինելը, ով ունի մեծ պոտենցիալ:

Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը երկու թեկնածուներին էլ արժանի մրցակից համարելով, նշեց, որ Տ.Միմյանի գիտական ջանասիրությունը, աշխատասիրությունը չի կարող չգնահատել, բայց նրա ելույթի մեջ որոշ չափով եսակենտրոն էլեմենտներ նկատեց: Ս. Գասպարյանը, չմտաբերելով Տ. Միմյանին ուսանողական տարիների ընթացքում, հարց ուղղեց, թե ո՞ր ֆակուլտետի շրջանավարտ է նա: Ի պատասխան՝ Տ.Միմյանը ասաց, որ նա չի հանդիսանում ԵԼՀ ֆակուլտետի շրջանավարտ և արտասահման գրականության ամբիոն էկել է հայկական բանասիրության ֆակուլտետից: Ս.Գասպարյանը, անդրադառնալով Ա. Սեդրակյանին, ասաց, որ ճանաչում է դեռ ուսանողական տարիներից, նրա գործունեությունը միշտ դրական լույսի տակ է ներկայացվել, թե՛ հեռուստատեսությամբ, թե՛ իրական ու գիտական կյանքում: Ս.Գասպարյանը շնորհակալություն հայտնեց երկու թեկնածուներին գեղեցիկ ելույթների համար: Բարի երթ մաղթեց թեկնածուներին:

Գ. Բարսեղյանը նշեց, որ ինքն էլ նկատեց եսակենտրոնության որոշ էլեմենտներ Տ.Միմյանի խոսքում՝ հավելելով, որ ԵԼՀ ֆակուլտետի առումով, որտեղ լի են գիտակ մասնագետներ, հզոր գիտնականներ նմանօրինակ մոտեցումը ողջունելի չէ: Նա շնորհակալություն հայտնեց թեկնածուներին գեղեցիկ ելույթների համար:

Տ. Միմյանը իր եզրափակիչ ելույթում որոշ պարզաբանումներ մտցրեց եսակենտրոն գաղափարի շուրջ ընթացող տարակուսանքների առումով՝ ասելով, որ, հավանաբար, գիտխորհրդի անդամների մոտ թյուր տպավորություն է առաջացել : Նա նշեց, որ գիտխորհրդի անդամ չէ, հետևաբար, շատերը ծանոթ չեն նրա գիտական գործունեությանը, այդ իսկ պատճառով որոշակի շեշտադրումներ է կատարել իր գիտամանկավարժական գործունեության վրա: Նա եզոցենտրիկ դրսևորման ոչ մի միտում չի ունեցել:

Ա. Սեդրակյանը իր եզրափակիչ ելույթում շնորհակալություն հայտնեց անկեղծ խոսքերի, ջերմ մթնոլորտի համար՝ անկախ քվեարկության ելքից:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Գ. Գրիգորյանը, անդամներ ընտրվեցին Մ.Յաղուբյանը, Լ.Տեր-Հովհաննիսյանը:

Քվեարկության ավարտից և ձայների հաշվարկից հետո Գ.Գրիգորյանը հրապարակեց քվեարկության արդյունքները:

Գիտխորհրդի 36 անդամներից քվեարկությանը մասնակցել է 36 –ը:
Բաժանվել է 36 քվեաթերթիկ, քվեատուփի մեջ առկա՝ 36 քվեաթերթիկ:
Սեղրակյան Անուշ Ռոստոմի կողմ՝ 32
Միսյան Տիգրան Սերժիկի կողմ՝ 2
Բոլորին դեմ եմ՝ 2

Ընթացիկ հարցեր

Գ.Բարսեղյանը ներկայացրեց մի գրություն, որտեղ առաջարկվում է բաժանել խմբերը ըստ լեզվի իմացության մակարդակների, ըստ տարբերակման: Քննարկումների արդյունքում առաջարկություն արվեց խմբերում ուսանողների քանակը փոքրացնել, այնուհետև անցնել այդ հարցի հետ կապված մյուս խնդիրների լուծմանը:

Գ.Բարսեղյանը անդրադարձավ ԵՊՀ –ում Մ.Ապրեսյանի ջանքերով իրականացվող լեզվի կենտրոնին և խնդրեց Մ.Ապրեսյանին սեղմ ժամկետներում մշակել ծրագիր՝ ներկայացնելու կենտրոնի հետ կապված հետագա անելիքները :

- Երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Պ. Գայանե Հարությունի Մուրադյանին պրոֆեսորի կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- «Ռոմանագերմանական լեզուներ /ֆրանսերեն/» մասնագիտությամբ հեռակա ասպիրանտ Տաթևիկ Նաջարյանին տեղափոխել Արտասահմանյան գրականության ամբիոն, որպես հեռակա ուսուցման ասպիրանտ և թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Ժան Կոկտոյի ստեղծագործական նորարարությունը»** վերնագրով, Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար նշանակել **դոց. Բ.Գ.Թ.Անուշ Ռոստոմի Սեղրակյանին**: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել Ռոմանական բանասիրության ամբիոնի Բ.Գ.Թ., ասիստենտ Զարուհի Ազիզբեկյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:
- Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ Ռուզան Ղազարյանի՝ « Ինքնակենսագրական վեպի ժանրային փոխակերպումները » մենագրությունը երաշխավորել տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Դավալյան